ՈՒՐԲԱԹ—26 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՓՈԱՆԵԻՒՆՆԵՐՈՐԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2730

Ն.—Տ.—8—ՀՈԿՏԵՄԲԵՐ—1880

ԳԱՅՄԱՆ

Տարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 Մկն.
» » Գաւառաց » 12 »
Վեցամսեայ » Կ. Պոլսոյ » 5 »
» » Գաւառաց » 6 »
Օտար երկիրներու » 21/2 Լիրա
Ծանուցման տողը մէկ անգամի համար 3 ղրուշ, երկու անգամի համար 2 ղրուշ, աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լինի։
Մէն մի թիւ 40 փարա արժէ։

ՄԱՇԿԱ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԳԱՅՄԱՆ

Դուրս գնացած լրագրաց ճանրաւ ծախքը Խմբագրութեան վրայ է։
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ ոչ ե իցէ գրութիւն Խմբագիրը—Տնօրէնին ուղղել, Գալատիա Առնարքնը. Ճատաւէտի թիւ 193, Նօրօ խան։
Մասին գրաւոնակը։
Ճանրաւ ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։
Ստորագրած նամակ, յօդուած, եւ նամակներ տարբեր։

ԳԱՅՄԱՆԵՐ

Դուրս գնացած լրագրաց ճանրաւ ծախքը Խմբագրութեան վրայ է։
Լրագրոյս վերաբերեալ նամակ կամ ոչ ե իցէ գրութիւն Խմբագիրը—Տնօրէնին ուղղել, Գալատիա Առնարքնը. Ճատաւէտի թիւ 193, Նօրօ խան։
Մասին գրաւոնակը։
Ճանրաւ ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։
Ստորագրած նամակ, յօդուած, եւ նամակներ տարբեր։

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՊՈԼԻՍ 26 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Այս առաւօտ հոսած հեռագիրներ

Վիէննա 6 հոկտ.

Փոլիթիկ Բորէսպոնտէնց լրագիրը կը ծանուցանէ թէ տէրութեանց միջև փոխադարձ բանակցութիւնը կը լինին Գերմանիոյ վերջին ծանուցագրոյն արուելիք պատասխանին վրայ։ Պահպանողական տէրութիւնք կ'աշխատին այդ ծանուցագրին յառաջ բերած տպաւորութիւնը նուազեցնել։

Լոնդրա 7 հոկտ.

Անգլիական կառավարութիւնը Գերմանիոյ վերջին ծանուցագրոյն նկատմամբ իւր առաջարկները ներկայացուց։ միւս տէրութիւնք կը խորհրդակցին։

Բուկուրէշտ 6 հոկտ.

Գարատաղլի Տանիլ խէմանը Անգլիական Հէյլքան շոգենաւն երթալով, Սէյմուր ծովախորին այցելութիւն արաւ։ Անէ քանարա զրահաւորին մէջ։ Բոլոր նաւախմբերը ողջունեցին Տանիլ խէմանը։

Լոնդրա 7 հոկտ.

Անգլ. Բանկ.	97 15/16
Օսմ. »	9 7/8
Փոխ. 1865	10 3/8
» 1869	10 1/4
» 1871	69 1/4
» 1872	17 1/2
» 1873	10
» 1877	82 1/4
Պանք Օսման	9 7/8
Ռուս. փոխ. 73ի	88 3/4
Եգիպտ. միացեալ	62 7/8
» արտօնաւոր	93 1/2
Տայրա Սանիէ	70 3/8
Փոխ. Ռօշիլտ	94 1/2

Փարի, 7 հոկտ.

Օսմ. Բանկ.	9,95
» Երկրաւոր	30,
Պանք Օսմանի	300,
Դարձ. » 3 0/0	119 78 1/2
» » 3 0/0 Նոր	81,82 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բ. ԴՈՒՌՆ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՊԱՏՃԷՆ

ԲԱՐԵՆՈՐՈԳՄԱՆՑ՝ ՆՈՐ ԾՐԱԳՐՈՅՆ

Վաղքթ լրագիրն երէկ իւր սովորականէն ինն ժամ ուշ ելաւ հրատարակել կարենալու համար Բ. Դրան վերջին ծանուցագրին պաշտօնական (թարգմանեալ) պատճէնն, որ իւր թերթին մէջ չորս սիւնակ կը լնու։ Այս ծանուցագիրը մասնաւոր գլխներու բաժնեալ է սա սիւղաներով.

1.— Բառաջաբան.
2.— Գարատաղի խնդիր.
3 — Հելլենական խնդիր.
4.— Հայաստանակ տաղեաց բարենորոգումները.
5 — Եւրոպական Թուրքիոյ կազմական կանոնագիր.
6 — Սլաւական խնդիր և պատերազմական տուգանք.
7.— Վերջաբան։

Յառաջաբանն և Հայաստանի վերաբերեալ մասն այսօրուընէ կը թարգմանենք.

«Պ. Դեսպան.

«Բ. Դրան տրտաքին գործոց նախարարը, նախարարաց խորհրդոյ որոշմամբ, կը խնդրէ Ձեր Վսեմութենէն որ հեռեւեալ խորհրդածութիւնները Ձեր կառավարութեան հաղորդէք։

«Տուլչինեան պարպելու համար, տեղական ժողովրդեան իրաւանց պաշտպանութիւնն, իրաց արդի վիճակին պահպանութիւնն և նաւային ցոյցին վերջնականապէս լքումն իբրեւ պայման առաջարկուած էր։ Օսմանեան դեսպաններէն եկած հեռագրաց և օտար դեսպանաց վերջին յայտարարութեանց նայելով այս երեք պայմաններէն առաջինը Պերլինի դաշնագրին տրամադրութիւնը լինելով, անոր համար մի բարոյական մը կարելի է եղեր երկրորդ պայմանին նկատմամբ պարտակատեղութիւն առանձնել անհնար, իսկ երրորդ պայմանն ընդունել՝ բացարձակապէս անկարելի է եղեր։ Տէրութիւնաց նաւատորմիղները, Բարտզա համախմբեալ, դարձեալ ձեռնարկութեանց սկսելու վրայ են։ Այսոր հեռեւանքը լինելիք անպատեհութեանց և դժուարութեանց ընդարձակութիւնն այժմէն որոշել անհնար է։ Նաւային ցոյցի կատարման համար առ այժմ պաշտօնապէս ցոյց տրուած պատճառը թէև Տուլչինեան Գարատաղի յանձնել է միայն, բայց եթէ կայսերական կառավարութեան պահանջած երաշխաւորութիւնը չտրուի, թէ այս իրողութիւնն և թէ ուրիշ մի քանի իրողութիւնք կրնան կարծել տալ թէ նաւային ցոյցն Հելլենական խնդրոյն լուծման համար ալի դրած պիտի դրուի։ Մինչեւ իսկ, կրնայ վախցուիլ թէ Հայաստանի գաւառաց բարենորոգման և ընդհանուր պարտուց տակոսներուն, ինչպէս նաև Ռուսիոյ պատերազմական տուգանաց խնդիրներուն համար ալ նաւային ցոյց ի դրած դրուի։ Ուստի, նաւային ցոյցը տէրութեան իրաւունքները վտանգի ենթարկող դրած մը լինելով, թէ՛ ներկային մէջ և թէ՛ յապագային անոր կատարումը վերջնականապէս արգիլելու համար, կայսերական կառավարութիւնն յարմար տեսած է այս ծանուցագրով բացորոշապէս յայտնել թէ Պերլինի դաշնագրով ըստանձնած իւր մէն մի պարտականութեան կատարմանը համար ի՞նչ ընել որոշած է։»

Անտատիկ Բ. Դրան ծանուցագրոյն «Հայարնակ գաւառաց մէջ ի գործ դրուելիք բարենորոգմանց» վերաբերեալ մասին ամբողջ թարգմանութիւնը.

«Կայսերական կառավարութիւնը Պերլինի դաշնագրով յանձնառած էր Հայարնակ գաւառաց մէջ տեղական պիտոյից պահանջած բարենորոգումներն անյապաղ գործադրել, Զէր.քէսոյ և Բրդոյ դէմ Հայոց հանդատութիւնն և ապահովութիւնն երաշխաւորել, և այս նկատմամբ ձեռք առնելիք միջոցները պարբերաբար ծանուցանել տէրութեանց, որք անոնց գործադրութեան վրայ հսկելու իրաւունք պիտի ունենան։

«Կայսերական կառավարութիւնը, խաղաղութեան կնքումէն յետոյ, Հայարնակ գաւառաց քննիչներ դրկեց, և քանի մը տեղերու ոստիկանութիւնն անմիջապէս մինչև աստիճան մը բարենորոգելու ձեռնարկեց։ բայց պէտք եղած բարենորոգումները դեռ ամբողջապէս ի գործ դնել չկարենալուն պատճառաւ, դաշնագիրը կնքող տերութեանց այդ նկատմամբ մինչև ցարդ բան մը չէր ծանուցած։ Իսկ այժմ կայսերական կառավարութիւնն այս մասին Պէյ.քը փաշայի և այլ պաշտօնատարաց ձեռամբ պէտք եղած քննութիւններն ամբողջացուցած լինելով, որոշած է հեռեւեալ բարենորոգումներն ի գործ դնել։

«Ա. — Ժողովրդեան ապահովութիւնն երաշխաւորելու համար կարնոյ, վանայ, Բաղէշի և Տիարպէքիրի նահանգաց մէջ գատարան, քանք առաւել ևս պիտի բարենորոգին և լաւագոյն կազմուածութիւն մը պիտի ստանան։ Միւշիր մ'այս գործին համար պիտի նշանակուի։

«Բ. — Կայսերական կառավարութիւնը տէրութիւնքէն խնդրեց, երբ երաշխաւորութեան ոգին հաշուելով ելք ընելու թուականէն հաշուելով ելքը ամուսնան պայմանաժամու մէջ, դիշեալ նահանգաց ներքին խաղաղութեան պահպանութիւնը ապահովելիք ոստիկանութիւնն (ժանտարմա) և ոստիկանութիւնը (Բոլիս) պիտի կազմէ։

«Գ. — Ոստիկանութեան Այայ պէյի կոչուած մեծ հրամատարները պատերազմական նախարարութենէն պիտի անուանին. իսկ ոստիկանութեան միւս ոստայք, մասնաւոր կանոնագրոյն համեմատ, Այայ Մէճլիսի կոչուած խորհուրդներէն պիտի ընտրուին, և կառավարոյց առաջարկովը պատերազմական նախարարութենէն պիտի անուանին։ Կառավարչք ընդհանրապէս տարօրինութիւն պիտի ունենան ոստիկանական գործութիւնը նահանգին մէջ երկնից ուղած տեղերը գործածել, և երբ անկարող Այայ Պէյերուն և ուրիշ ոստայից պաշտօնակութիւնը խնդրեն, պատերազմական նախարարութիւնը պիտի ընդունի նոցա խնդիրքը։

«Դ. — Նահիէներու (գիւղաւարներ) կազմութեան համար Բ. Դրան (Այպէտին փաշայի) յուլիս 3 թուականաւ ծանուցագրոյն մէջ բացատրուած դրութիւնը՝ կայսերական կառավարութեան շահուց համաձայն կերպիւ չորս ամսուան պայմանաժամի մէջ ի գործ պիտի դրուի։

«Ե. — Վերայիշեալ նահանգաց մէջ, մանաւանդ, անուղղակի տուրքերը, հեռագրատան և թղթատարութեան հասոյթներն իրաց առեալ, մեացեալ եկամուտներէն նախ իւրաքանչիւր նահանգի պաշտօնատարաց ամսականներն և ուրիշ վարչական կարեւոր ծախքերը պիտի տեսնուին։ Մնացած հասոյթէն 100ին 10ը հատարակային կրթութեան և հանրօգուտ շինութեանց պիտի յատկացուի, իսկ 100ին 90ը Կ. Պոլիս պիտի ղրկուի։

«Զ. — Նահանգային պաշտօնատարաց մէջ դատական պաշտօնատարաց ընտրութիւնն և անուանումը կատարեալ առաջարկութեան վրայ կայսերական իրատեսով պիտի կատարուի։ Բայց Մութասարրիֆներէ (կառավարիչ) Տէֆթէրտարներէ (հաշուակալ) և Մէճլիսներէ (առաջին քարտուղար) զատ միւս պաշտօնատարաց փոխոխումն և նշանակումը, մասնաւոր կանոնաց սահմանին մէջ, կառավարչաց ձեռնհատութեան կը վերաբերի։ Ցիշեալ նահանգաց մէջ պաշտօն վարելիք անձանց լրկ կարողութիւնն ու պարկեշտութիւնն ի նկատ պիտի առնուին, և Պերլինի դաշնագրին 62րդ յօդուածին և տէրութեան ներկայ օրինաց համեմատ, այդ հանգամանքներն ունեցող ամեն կարգի հպատակներէ պաշտօնատարներ պիտի անուանին։

«Է. — Նիզամիէ դատարանաց մէջ Մէճէլլէն և տէրութեան ուրիշ կանոնագրերը կիրառութիւն պիտի ունենան։»

———

Վ.Հ. Սուլթանն իւր Կանոնագրին նորընծայ Պահպանատեղեա Հաֆիզ Պէհրամ աղային առաջին կարգի Մէճիտիէ պատուանշան տուաւ։

———

Երրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Օսմանեան հանրածանօթ դրագիր Ահմէտ Միտհաթ էֆէնտիին, որ Թաղաթիի վաղայեի անօրէն, և Թէրճէմանը Հաղիզամիի և Օսմանլըի խմբագիրը է։

———

Երէկուան Սիմանպալի մէջ կը կարդամք.

«Նախարարաց խորհուրդն, որ ժամանակէ մ'ի վեր կայսերական պալատը տեղի կ'ունենար, երէկ Բ. Դուռը գումարեցաւ, ուր սակայն արտասովոր շարժում մը չկար։

«Իրիկուան դէմ գրոյց եղաւ թէ Օսմանեան նախարարութիւնը կարեւոր զեկուցումներ ստացած է Եւրոպայէն։ Նախարարք որոշեցին մեծ խորհուրդ մը գումարել այսօր, որ տէրութեան քաղաքային, զինուորական և կրօնական բարձրագոյն պաշտօնատարներէն պիտի բաղկանայ։ Այնն կողմ հրաւիրագրերը զրկուեցան, և այժմ այդ մեծ խորհուրդը գումարուած պէտք է լինի Բ. Դուռը։»

Թուրք լրագիրք այս առաւօտ բան մը չեն ծանուցեր այս Մեծ խորհրդին նկատմամբ։

———

Անտանի անուն վերջին ծայր ազգատոհ Յոյն արհեստաւոր մը, որ մեծ ընտանիքի մը տէր էր, անցեալ օր Արնաւուտ քէյի մէջ անձնասպանութիւն գործեց յուսահատութեան պատճառաւ։

Բերայի մէջ ալ քանի մ'օր առաջ Յոյն երիտասարդ մը, որ երեք տարիէ ի վեր թաքուստի ենթակայ լինելով մելancholիութիւն ստացած էր, նոյն յուսահատական միջոցին դիմեց։

———

Պ. Կոշէն երէկ դեսպանատան քարտուղար Պ. Սէնէմ-ճանի հետ Նիկոմիդիա գնաց։

———

Մէ.քէ ուխտի երթալու համար Կեդրոնական Ասիայէն քանի մը հարիւր Թիւրքմէններ և ուրիշ Մահմետականք եկած էին Կ. Պոլիս։ Օսմանլը Ֆրանքօ-Թուրք թերթն այս նկատմամբ հետեւեալը կը գրէ.

«Այս իսլամք կարծելով որ բոլոր իսլամաց խալիֆին երեսը նայիլ իրենց պարտքերէն մին է, անցեալ ուրբաթ օր Սէլամլըզի արարողութեան ներկայ գտնուեցան ի Պէշիքթաշ։ Վ.Հ. Սուլթանն այս խառնուրդները տեսնելով, թիւնատպահի մը միջոցաւ բարև զրկեց անոնց։ Ուխտաւորք մեծապէս ուրախացան և ջերմեռանդութեամբ աղօթքներ ըրին խալիֆին կենաց և Օսմ. տէրութեան բարգաւաճման համար։»

———

Ռիւթէրի գործակալութիւնը մայրաքաղաքէս կը հեռագրէ Անգլիական վերջին լրագրաց թէ Թըրօյթիրը հաղարապետը տեղեկագիր մը մատուցանելով առ Պ. Կոշէն՝ խնայացուցեր է թէ Բարդք ասպատակութիւններ կը գործեն Վանայ շրջակայ գիւղերէից մէջ, և թէ Պայազիտի ալ կ'սպառնան։ Վանայ Դեր-Հիւպատոս Պ. Բլէյթլը սոսկալուր է գնդակներ փոխանակել այս չարագործաց հետ։ Պաղատի Անգլիական ընդհանուր հիւպատոս Պ. Մայրը գնդապետն ալ տեղեկագրոյ մը մէջ կը յայտնէ եղեր թէ Տիգրիսի վրայ նաւարկութիւնն ամենուին ապահով վիճակի մէջ չէ, թէեւ ինք կ'աշխատի համոզել Պաղատայի կուսակալն, որ պէտք եղած միջոցները ձեռք առնուին։

———

Նախընթաց օրն Իսմայլի օրիորդ մ'ապատարին գործոց պաշտօնատարն երթալով յայտարարեց թէ խլամութիւն պիտի ընդունի։ Ծնողքն և երեք Գամենիկեան Հայրերք չատ աշխատեցան եւ կեցնել իւր որոշումն։ Ցեռներով որ իրենց յորդորներն ի դերեւ կ'երթեին, խորհրդական Տատեան վարեմ. Ցարութիւն էֆէնտիին դիմեցին, որ նոյնպէս քանի մ'խօսքեր բաւ՝ աղջկան, բայց սա մինչեւ վերջը պնդեց։ Կը կարծուի թէ սէրը մեծ դեր կը խաղայ այս կրնտափոխութեան մէջ։

———

Փիլիպէի մեծատոհմ լեւոնեանց վրայ ձիւն տեղացած է։

———

Հալէպի կուսակալ Սայիտ փաշան իւր նահանգին այլ և այլ գաւառակները քննութեան պատճառ մ'ընել սկսած է։

———

Մարիձա լրագիրը կը ծանուցանէ թէ Ալէքս փաշան վերադարձեր է Պուլղար երիտասարդաց կազմած Մակեդոնական Ընկերութեան կանոնագիրը։

———

Տրապիզոնէն կարին տանող ուղին վերանորոգելու տրամութիւն տրուեցաւ Տրապիզոնի կուսակալին։

———

Թաղսիմի կղզին գիտակը գրաւուած Մշեցի Հայուն անունն էր Շերմանդլը Մարտա։ Բան և հինգ տարեկան գործաւոր մ'էր սա։ Երկու Հարիւր սնկիէ աւելի խլամայոսութիւններ ունէր, որք ուրիշի քով պահուած լինելով, տիմ իւր ընտանեաց կը գրկուին։ Բայց կը կարծուի թէ գողութիւնը շարժառիթ եղած էր այս սճրին։ Կասկածելի երեք չորս անձինք բռնուեցան։

———

Ռօտոսթայի կառավարիչ Համիտ փաշան, Օսմանեան ընտրելագոյն և երիցագոյն կառավարչաց մին, որ լաւ յիշատակներ թողած է իր պաշտօն վարած բոլոր տեղերն, երկու ամսուան համար արձակուրդ առնելով Կ. Պոլիս եկաւ։

———

Աֆիոնատանոյ Էմիր Ապա-իւլ-Բահման խան ի մեծոյ այցելութիւն պիտի տայ Հնդկաստանի փոխ-Արքայ Ռիպոնի մարքիզին։

———

Եղիպտոսի նախարդ Խրտիվ անցեալ շաբթու մէջ Նախրի վերադարձաւ, և անտի իւր ուղեւորութիւնը շարունակեց Իսմայիլայ ներսերը։

———

Ըստ նոր վիճակագրութեանց, երկու տարուան մէջ երկրիս բնակչաց թիւը 17 միլիոն աւելցած է։ Այսօր 1,455,923,500 բնակիչ կայ երկրիս վրայ, այսպէս բաժանեալ, Եւրոպա, 315,329,000 · Ասիա, 834,707,000 · Ափրիկէ, 205,679,000 · Ամերիկա, 95,495,500 · Ովկիանիա, 4,631,000 · Բուսական երկիրներ 82,000։

ԲԱՂԱՔԱԿԱՆ

Երեքշաբթի օրը զրոյց եղաւ թէ Ազգ զիական Նաւատորմն Արշիպեղագոս կամ Պեշիկա երթալու հրաման ընդուներ է։ Բերայի լրագրերէն ոմանք այս զրոյցին տարակարծ եղան յայտարարելով միանգամայն թէ կանխահաս է։ Բ. Դրան վերջին և երկայն ծանուցագիրը, 'ի պատասխանի դեսպանաց տեսու. 6ի ծանուցագրոյն, երեքշաբթի առաւօտ Լոնտրա հասած է, և կարելի չէ անմիջապէս հրաման տալ որ նաւատորմը մեկնի՝ առանց նախարարական խորհրդոյ և բանակցութեանց։ Այսկէց զատ, ինչպէս յայտնի է, Պ. Կլատսթոնի ծրագրին էր Եւրոպական ներդաշնակութեամբ գործել։ Այսոր համար քանի մ'օր բանակցութեանց պէտք կայ, որոյ վրայ կարելի է համաձայնութիւն մը հաստատի նոր և առաւել ազդու գործողութեան մը համար, և կամ ներդաշնակութիւնը բոլորովին վերջանայ և մէկ երկու տերութիւնք միայն մնան գործող։

Այժմ Բ. Դուռն Եւրոպիոյ դէմ առ դէմ մնացած է, և այս վերջինն իւր բոլոր առաջարկները մերժուած կը տեսնէ։ Եթէ վեց տերութիւնք միանոյն զգացմամբ ցուին նաւային ցոյցին անյաջողութենէն, Թուրքիա խիստ դժուարին կացութեան մը մէջ պիտի գտնուի. բայց հաւանական է որ այս ցաւն ամեն տերութեանց կողմէ միանոյն ատատութեամբ չզգացուի և դիւանագիտութիւնը վեց տերութեանց միջև միաբան գործողութիւն մը դժուարին դանէ. այս դարագայից մէջ եթէ Բ. Դրան վերջին ծանուցագրին խոստումներն իւրաքանչիւր գործադրել սկսին, կարելի է տերութեանց շատերը զէնքնկէց լինին։

Մեր Բերայի պաշտօնակիցներէն մին ասոր համար Գաղղիոյ օրինակը կը ցուցնէ մեզ, և կըսէ որ եթէ իւր ձախող պատերազմէն յետոյ երկու տարի նստէր լար, արդեօք իւր վիճակն ո՞ւր պիտի մնար։ Բայց Գաղղիա այսպէս չբրաւ. հաշտութենէն անմիջապէս յետոյ, առանց անօգուտ դանդատներ ընելու, առանց պարտութեան հետանքէն խուսափելու ջանից, իւր բոլոր ճիգը ներքին վերակազմութեան դարձուց, և այսօր հիանալի կերպիւ վերականգնեցաւ։ Գաղղիոյ և Թուրքիոյ ընթացից մէջ մեծ տարբերութիւն կայ. բայց եթէ այս վերջինն ևս՝ դոնէ անազան՝ ըստ իւր նոր ծանուցագրին բարեհաճողմանց ձեռնարկէ, երկրին բնական հարստութիւնը կրնայ իւր արագ վերականգնման մեծագոյն նպաստել։

Դիտողութիւն կը լինի թէ Եւրոպիոյ մէջ Բ. Դրան դէմ եղած գլխաւոր քննադատութիւնն այս է թէ իւր բարեհաճողմանները թուղթի վրայ ծրագրերէ կամ յանձնախումբերէ միայն կը բաղկանան. երբէք երկիր մ'այսչափ բազմաթիւ օրէնք և կանոններ չունի, կամ այնչափ առատ յանձնախմբեր կազմած չէ, որոյ ամենն ալ ապարդիւն մնալով՝ Եւրոպիոյ միջամտութիւնն սկսաւ, որուն գործնական բարեհաճողմամբ միայն կրնայ վերջ տրուիլ։ Այս միջոցիս վեց տերութեանց ներդաշնակութիւնը խանգարուելու դուշակութեամբ մասնաւոր տերութեանց ոմանց միջև համաձայնութեան բանակցութիւնք կը լինին, և կ'ըսուի թէ Ռուսիա Գերմանիա և Աւստրիա երբակի դաշնակցութիւնը պիտի վերանորոգեն։ Աւստրիոյ կայսեր Բրաքովիա ըրած ուղեւորութեան առթիւ Ռուսիոյ կայսրն Ալեքսանդրի իշխանը զայն դիմաւորելու գրկած էր։ Աւստրիոյ կայսրը լաւ ընդունելութիւն ընելով նմա, բաժակ ըմպած էր ի պատիւ Ռուսիոյ կայսեր, և Ալեքսանդրի իշխանը Լիվատիա վերադարձած էր իւր դատ ընդունելութեան վրայ Զարին տեղեկութիւն տալու համար։ Այսոնք համաձայնութեան և բարեկամութեան նշաններ կը համարուին, և կ'ըսուի թէ Ռուսիոյ կայսրը Պոլսոյի բնակչաց վրայ բացառիկ ազդեցութիւնը թողով, ճանչեր է Աւստրիոյ պահանջն, որով կ'ուզէ ազդեցութիւն ունենալ իւր մերձակայ երկիրներու վրայ։ Պէրլինէն հեռագիր մը չտիպագրեց կը համարի եւրոպական կայսերաց միութեան վերանորոգուելուն զրոյցները։ Բայց կարելի է որ, չտիպագրութիւնն ի բաց առեալ, տակաւին զոնէ պարզ բարեկամութիւն մը մնայ։

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼՆ

ԲՈՒՐԴԲ

Թերճէմանը Հպիտալ լրագրին իւր երեկուան թուով հետեւեալը կը հրատարակէ «Բիւրախման» լրագրոյն ներքև։

«Վերջերս վանէն մեզ եկած նամակ մը Բրդուսայի վիճակին վրայ ընդարձակ տեղեկութիւններ կուտայ։

«Բուրդը՝ Անատոլուի բարեհաճողութիւններուն տերութեանց կողմէ մասնաւոր խնդրոյ մը կերպարանք ստանալուն յոյժ կարեւորութիւն կուտան, և մեծ յուզման մէջ են մտածելով որ իրենց նահանգն ալ Արեւելեան Ռումելիի նահանգին նման բան մը կրնայ լինել։

«Բրդուսայի Բուրդը՝ Կ. Պոլիս բնակող Բուրդ երեւելեաց կողմանէ զրկուած նամակներէն ազատդայն լաւ կրնալով դուշակել, կառավարական պաշտօնատարաց կը դիմեն հասկնալու համար թէ գործոց վիճակն ինչ պիտի լինի ապագային մէջ, իսկ անոնցմէ ևս բացորոշ տեղեկութիւն մը չեն կարող ըստանալ։

«Թախտաւիկ ցեղերը քանի որ տեղէ մ'ուրիշ տեղ փոխադրեն իրենց բնակութիւնը, շրջակայ ցեղերու Գրուխներն անմիջապէս յիշեալ Աշիրէթին մեծին քով հաւաքուելով, կը հարցնեն թէ Բրդուսայի վրայ ինչ տեղեկութիւն բերած է, և անկէ ալ բացատրութիւն մը չկրնալով ստանալ, իրենց առջի մտահոգութեան մէջ կը մնան։

«Առ այժմ Բրդուսայի մէջ Միութիւն մը կազմելու ո՛և է ձեռնարկ չկայ եղեր. միայն թէ Բուրդ Պէյեր Բրդուսայի վիճակին և պէտք եղած բարեհոգմանց վրայ իրենց դիտողութիւնները Բ. Դրան և կամ Եւրոպիոյ յայտնելու համար խորհրդակցելու պէտքն ըղդայեր են, որով կը յուսացուի եղեր թէ ի մօտոյ Միութիւն մը կազմեն. բայց այս Միութիւնն ո՛չ թէ Ալպանիական Միութեան նման զինեալ Միութիւն մը, այլ լոկ Բուրդ Պէյերու և երեւելեաց բանակցութեան և խորհրդակցութեան ժողով մը պիտի լինի եղեր։ Զի Բուրդք արտաքին կամ ներքին ո՛և է թշնամանց մը յարձակումներէն չեն վախնար եղեր, լաւ հասկցած լինելով թէ իրենց խնդիրը տերութեանց միջև բանակցութեամբ կրնայ վերջանալ։»

Վագրի լրագիրը Տիարպէքիրէն գրուած նամակ մը կը հրատարակէ, որ Տերսիմի Բրդարնակ գաւառին վիճակին վրայ հետեւեալ տեղեկութիւնները կուտայ.

«Վանայ և Կարնոյ բարեհոգմանց Բօմիսեր Եուսուֆ փաշան և Սարգիս էֆէնտին՝ Բաղէշի նահանգին այցելութիւն տալով տեղական պէտքերը քննելէ յետոյ, Բալուի ճանրով անցեալները Բարբերդ հասան, և անտի Ֆերիք Ֆաղը փաշայի ընկերակցութեամբ Տերսիմ գնացին։

«Բարբերդէն եկողներուն ըստ տեղեկութեանց նայելով, այս Բօմիսերք Տերսիմի բարեկարգութեան և յառաջդիմութեան համար պէտք եղած միջոցները պիտի քննեն. նոյնպէս, այդ երկիրն առանձին Միութեան Միութիւն (Սանճագ, կամ Գաւառ, և կամ կառավարչութիւն) մ'ընելով պէտք եղած զինուորական դիրքերը դրաւելու մասին Ֆերիդ Ֆաղը փաշային ըրած առաջարկն ի նկատ պիտի առնուն եղեր։ Ես Տիարպէքիր դալու համար ժամանակաւ Տերսիմէն անցած և շաբաթի մը չափ Երզնկայի և Բարբերդի միջև խողթի կոչուած դաւառակը բնակած լինելուս պատճառաւ, այդ կողմերու վիճակին վրայ բաղում տեղեկութիւն կրցայ հաւաքել, զորս առանձին գրել մտադիր եմ։ Առ այժմ սա չափն հարկ կը համարիմ ըսել թէ Տերսիմի երկիրն 550 գեղէ և 55,000 հոգի է բաղկացեալ լինելով հանդերձ, Մեծկերա, Օվաճըգ և Խուզիյան անուամբ երեք գաւառակայ բաժնուած և վարչութիւնը միայն երեք Դայմագամի յանձնուած է։ Տեղական վարչութեան հանրածանօթ վիճակին մէջ, բարեկարգութիւն և ժողովրդական յառաջդիմութիւն բացարձակապէս անհնար եղած են, և մինչև յարդ Տերսիմի մէջ օրինաւոր կառավարութիւն չէ կեցած։ Այս կերպիւ անկարելի էր այդ երկրին տպագ այն ապահովել։

«Իրաւ է որ Ֆերիք Ֆաղը փաշան Տերսիմի մէջ զինուորական բարեկարգութիւններ կատարել սկսելէն ի վեր յաջողեցաւ ըստ բաւականին խաղաղութիւն հաստատել անդ, և կատարեալապէս առաջքն առաւ այն չարագործութեանց, զորս Տերսիմցիք Զէյկատաղի, Բալուի, Զարսանճագի և այլ գաւառակաց և գիւղախմբաց մէջ ի գործ կը դնէին. և միւս կողմէն, կարգացաւ Տերսիմի վարչական բարեկարգմանց ալ զրաղիլ մինչև ատաճան մը։ Բայց այդպիսի ընդարձակ գաւառի մը զարգացման և քաղաքակրթման համար պէտք եղած հատարակային շինութիւնք և դպրոցք երբէք ի նկատ չեն առնուած։ Վայրենի վիճակի մէջ գտնուող այդ գաւառը քաղաքակրթելու համար Միւթէսարրիֆութիւն և Երեք չորս Դայմագամութիւն պէտք է հաստատել անդ, գործողութեան ազատութիւն տալու է այս պաշտօնատարաց, և այլեւայլ միջոցներով, պէտք եղած բարեհոգմանները մտցնելու է Տերսիմի մէջ։»

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԵՐԸ

ՌՈՒՍԱԿԱՆ ՏԵՍԱԿԵՏՈՎ

Ռուսական Կոլոս լրագրին կարնոյ թղթակիցն օգոստ. 20 թուով երկար նամակ մը կը գրէ Հայաստանի գործոց վրայ։ Մեք կը բաւականանամք հետեւեալ անվնաս կտորներն ընդօրինակելով իբրև հետաքրքրական ինչ.

«Ռուսաց յիշատակն անջնջելի է ասա։ Հաղուագիւտ է առն, ուր մի Ռուս սպայի յիշատակը չդտնըւի։ Մէն մի սպայ՝ իբրև յիշատակ՝ թողած է խաչ մը, պատկեր մը, կամ՝ լուսանկար մը։ Փոխարէն այն հիւրասիրութեան զոր տեղւոյս Հայոցմէ տեսան, Ռուս սպայք այդ ընծայներէն լաւագոյն միջոց չունէին շնորհակալութեան։

«Ան տանտէրն, որոյ քով իջեր էի, ունէր առողջապահական մասնաժողովոյ նախագահ բժիշկ Բէյլենկերի պատկերը։ Պէտք էր տեսնել թէ ո՛րպիսի երկիւղածութեամբ կը պահուէր Ռուս բժիշկի յիշատակը։ պատկերը հարուստ ծաղիկներով ու պսակներով զարդարուած և ոսկէ շրջանակի մը մէջ դրուած էր։ Տեղացի Հայերը յոյժ երախտագէտ են այս բժշկին, որ մեծ եռանդով պատերազմեցաւ այն տարափոխիկ հիւանդութեանց դէմ, որք ինչպէս կը յիշուի, Ռուսական զրաւման միջոցին ծագած էին, և սարսափելի կերպիւ տարածուիլ կ'սպառնային։

. . . . . .

«Կարսի գաւառէն այս կողմը (Կարին) զաղթող Թրքաց (՞.) գերեմէ ամենն ալ կ'ուզէորին դէպ 'ի հեռաւոր Արեւելս, 'ի Դամասկոս (՞. ՞. Մեէսոպէ Եէպ հեռ՝ է Դամասկոս։) Ուստի Հայք 'ի հարկէ գոհ կը լինին, և գաղթողաց ճանրաները կ'օրհնեն։

«Գաղղիոյ նոր հիւպատոս Պ. Լաքոսթ այս տեղ հասաւ։ Անոր նկատմամբ բան մ'ըսել կարելի չէ տակաւին, ըստ որում դեռ բանի չէ խառնուած։ Բայց առաջին տպաւորութեանց համեմատ ամեն ոք կ'ըսէ թէ նա մոլեռանդ կաթոլիկ չէ, որպէս էր Գաղղիական նախորդ հիւպատոս Պ. Ժիլպէռ, այլ զգաստամիտ մարդ է։ Քաղաք մնած ժամանակ նա հանդիսապէս ընդունեցաւ Հայ երիտասարդութենէն, ուստ ըստ թէ ինք եկած է պաշտպանել ո՛չ թէ կրօնական, այլ զգային իրաւունքներ։

«Պատերս ներկայ էի Հայոց զգային մեծ ոտնին, որ ամեն տարի կը կատարուի Խաչափայտ լեռան վրայ։ Ամէն լեռներէն կը բղխի երիտասարդ, որ կը պտտուրէ Հայաստանի տխաղին տարածութիւնը։ Ուստի այդ դեռին զգերաստանը կուռնը կրօնական ուխտատեղի մ'եղած են։ Աւանդութիւնը կ'ըսէ թէ այդ լեռան մէջ թաղուած էր Կռատաշտներէն հալածեալ խաչն, որոյ վրայ Փրկիչը խաչեցաւ, և երբ կռատաշտք հողը կը փորէին Քրիստոնէական սրբութիւնը ձեռք բերելու և պղծելու նպատակաւ, փորուած տեղէն յանկարծ ջուր բղխեց և զամենը խզդեց իւր հեղեղներով։ Այսպէս ծաղում՝ առեր է Եփրատ։

«6,700 տուք բարձրութեան վրայ աչքիս առջև կը տարածուէր փոքրիկ բլուրներով շրջապատեալ մի տափարակ։ Բան որում զանազան ուղղութեամբ այս տափարակէն կը բղխին չորս գետեր՝ Տիգրիս, Եփրատ, Երասխ և Ճորոխ, ուստի երկրին աւանդութիւնը կ'ըսէ թէ Եդեմական Դրախտն ատ էր։ Կը պատմուի թէ քանի մը տարի առաջ Դաղղիացի մը Հայաստան ուղեւորեր է միայն այն նպատակաւ որ անձամբ տեսնէ Ադամի կալուածները, բայց զարմացեր է չը գտնելով անդ Ս. Գրոց բոյսերն։ Այս Դաղղիացին մեծաքանակ դուսմարներ ծախք ըրեր է այդ ձեռնարկութեան համար, և իրեն օգնող թարգմանիչն ինձ ցոյց տուին։

«Կարնոյ Արմենուհիք զմայլելի կերպիւ դեղեցիկ են։ Ասոնք բայց երեսով կը պարտին, և ազգային մասնաւոր հագուստ մը կը հագնին, որոյ յատկանիշն է կարմիր կամ կապոյտ և կամ ոսկեթել գծերով կարուած գոգնոց մը։ Գլխի զարդարանքն յոյժ հարուստ է և դեղեցիկ։ Սեահերները քիչ են. այս տեղի Արմենուհիք մեծ մասամբ շիկահեր են՝ մեծ և կապոյտ աչքերով։»

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

ԲԱՌԱՐԱՆ ՖՐԱՆՍԵՐԷՆ-ՀԱՅԵՐԷՆ

ՆՈՐԱՅՐ Ն. ԲԻՒԶԱՆԴԱՅԻՈՅ

(Շարունակութիւն և վերջ)

«Մեր մէջ երեւելի լինելոյ համար բաւ է որ մէկն հարուստ լինի, չէ փոյթ եթէ իւր անունն իսկ առաջարկել չդիտէ։ Լորտ Պիքընսֆիլտ, որ երբեմն իբրև Մոթիր Տիզրայէլի լրագրոյ մէջ յօդուածներ կը գրէր, ոչ իւր հարստութեամբ՝ այլ դրագիտական տպաղանդով Անգլիոյ թագաւորէն առաջին նախարարն լինելոյ բարձր պատիւն ունեցաւ։ Նորա աղքատիկ կացութիւնն զաղանիք մի չէր բնաւ, այնպէս որ երեւելի էրէ մի նորա տաղտնդն դնահատելով քառասուն հազար ոսկի նուէր ըրաւ անոր։ Լուսաւորեալ ազգաց մէջ գիտեն քաջալերել տաղանդները։ Եթէ Մոթիր Տիզրայէլի մեր երկրին մէջ ծնելու դժբաղդութիւնն ունենար, երբէք Լորտ Պիքընսֆիլտ ընելոյ բաղդն չը պիտի ունենար։

«Ի՞նչ է արդեօք Մոթիր Կլէտսթընի բարձր անուան դաղանիքն։—Մոթիր Կլէտսթընն, որում զանազան առթիւ կամաւորութեան ոգեղէն առաջարկեց Թագաւորին և նա ակնածութեամբ մերժեց։

«Լիւ-Բրէնբ Լէոդ Նէ՝ չարաթաթերմն մանաւոր էջի մէջ յատուկացաց փոխուել անձանց անուններն յաջորդաբար կը հրատարակէ նոցա հարստութիւններն ևս յիշատակելով— անձեր՝ որոնցմէ շատերն թէպէտև խիստ հարուստ, սակայն անանուն կեանք վարելով՝ անծանօթ հանդիսացած են հասարակութեան։ Սակայն անդգիական լրագիր մը «Թօմ Թէյլըր» Բէ՝ Լրագրոյն երեւելի խմբագրոյն՝ որ վերջին օրերս յատուկաց փոխեցաւ, անուն անմահացընել կ'ուզէին դովութեամբ։

«Մեր այս փոքրիկ յօդուածն խիստ պիտի երկարի, եթէ Եւրոպիոյ միւս ազգաց երեւելի անձանց անուններն իսկ յիշատակելու փորձն փորձեմ։— երեւելի անձանց՝, որոնք իրենց տաղանդովն ու հանճարովն պատուոյ և իշխանութեանց գագաթնակէտն հասած են։

«Մեք Եւրոպիոյ առջև ինչո՞վ պիտի պարծիմք արդեօք, կամ քաղաքակիրթ ազգաց համակրութիւնն ստանալու համար ի՞նչ հանդամանքներով պիտի ներկայանամք Եւրոպիոյ։

«Մի քանի տարի առաջ ի Պուլղարիա տեղի ունեցած հարատահարութեանց դէմ բողոքելու համար երեք հարիւրէն աւելի Միթինկներ տեղի ունեցան Անգլիոյ զանազան քաղաքներուն մէջ։ Ժողովուրդն՝ Պուլղարայ բարի հանդամանքներն դովաբանելով՝ ի մէջ այլոց մտայնն լուսաւորութեան այսինքն հասարակաց կրթութեան համար նոյա ըրած ջանքերն կը յիշատակէին, ասելով թէ Եւրոպիոյ համակրութեան արժանի ժողովուրդ մի են։

«Հայ ազգն ևս Եւրոպիոյ համակրութեան արժանի հանդամանքներ ունի՞ արդեօք։ Դատապարտութեան նիստմամբ, մեր ընկերակից և դրացի ազգաց ցարդ ըրած յառաջդիմութեան համեմատ արդիւնք մեք ևս կրնա՞մք ցնորկայացընել։ Ց'արդ կը կարծէինք որ Պոսփորի և ասոր մօտակայ ոստիններուն մէջն էին միայն Հայերն. մոռցած էինք և հաղիւ կը յիշէինք թէ Հայաստան մը կար, և թէ հոն Հայեր կային։ . . . Եւրոպա, այո՛. Եւրոպա զարթոյց զմեզ և յիշեցոյց մեզ մեր պարտքերն. հաղիւ հաղ ուշաբերեցանք և՝ սկսանք գործել Զանց նկատութեան առնլոյ մեր վիճակին դատութիւնն, առանց տակաւին իրական արդիւնք մի ներկայացնելու՝ շշտկել կը նկրտինք Եւրոպիոյ առջև թէ մեք քաղաքակիրթ ազգ մի եմք։ . . . և կ'ըսատնինք կանխաւ որ գովեստներ արուին մեզ։ Երբ Եւրոպական լրագրոյց մէջ Հայոց համար նպաստաւոր յօդուած մի կը կարդամք, նոյնը իրարու ձեռքէ կը յաջորդեմք, կը պարծիմք և կը փառաւորիմք վայրապար, առանց խորհելու թէ նոյն գովեստից արժանի եմք արդեօք։ Բայց երբ Բալկիէվ կամ Լիսըն մի յանկարծ բոլոր աշխարհի առջև կծու և նախատական խօսքեր կ'ուղղէ մեզ, կը վիրաւորիմք և կը վշտանամք՝ առանց փոյթ ունենալու նոյն կծու խօսքերու մէջ օգտակար դասեր որսնելու։ Պէտք է խոստովանիմք որ մեք ևս ազգային շատ թերութիւններ ունիմք, և հարկ է որ մերթ ընդ մերթ կծու ազդարարութիւններ լինին մեզ, մանաւանդ օտարներու կողմանէ, դէպ ի ուղղութիւն բերելու համար զմեզ։ . . .

«Ուրեմն Եւրոպիոյ համակրութեան արժանի հանդիսանալու համար, մեր բոլոր ճիգն նախապէս պէտք է որ հասարակաց կրթութեան ծաւալման մէջ կենդրոնուայ։

«Կոստանդնուպօլսոյ վարժարանաց վրայ տեղեկութիւնք չունիմք, և չգիտեմք ինչ դրութեամբ կը յառաջանան։ Բայց կրնամք խոստովանիմք մեծ հաճութեամբ որ հոն դոնէ խակական Հայ տարր մի կայ որ կը գործէ, հոն Հայ երիտասարդութիւն մի կայ, որ իւր ազգասիրութեամբ կը փայլի։ Հոն հաստատուելոյն հզօր ընկերութիւններ, որ կը գործեն անընդհատ յօդուտ Հայաստանի մեր խեղճ ազգային։ Պօլսոյ Հայն, մանաւանդ վերջին տարիներուս մէջ, նախանձելի հանդիսացաւ իւր ազգասիրութեամբն։ Հայկական խնդրոյ համար ըրած զոհողութեամբն։

«Եթէ մեր խօսքն գաւառական

Հայոց ազգերով՝ մանաւանդ և Զմիւռնիոյ վրայ խօսիմ, տխրաւորութեամբ և տկամայ սրտի խոստովանիմ որ մեր երիտասարդութիւնն, փոքր ինչ բացառութեամբ, մեռած է, չկայ մեր մէջ այն ազգասիրական ոգին որ Պոլսոյ Հայոց մէջ կը տիրէ։ Քանի որ Պոլսոյ Հայը Հայկական խնդրոյ համար նախանձաւոր կաշխատի և զոհողութիւններ կրնէ, Զմիւռնիոյ Հայն չարժիր, կարծես թէ ինքն նոյն ազգութեան չպատկանիր, իրր թէ նոյն կենդանական խնդրոյ ինքն մասնակցութիւն չունի ընաւ։ Մեր վարժարանաց բարւոք կարգ ապրութեան և յառաջդիմութեան համար խիստ անտարբեր եմք։ Ընթերցաւան մի ունիմք, որոյ գոյութիւնն շատերն իսկ չեն յիշեր։ Ազգային օգտակար նպատակի մը համար ընկերութիւն մի հաստատելիք, և ութ ամիսէ 'ի վեր ոչինչ արդիւնք առաջ բերին։ — Միւնեաց ընկերութիւն որ առաջին անգամ 1863ին Զմիւռնիոյ մէջ հաստատուեցաւ, և այն ժամանակ Ազգին խիստ մեծ ծառայութիւններ մատուցի։ Խոստովանիմ և յայտարարեմ արդեօք պարզապէս թէ քաղաքս ունի առաջ աւելի հայրենասիրական ոգի, և լուսաւորութեան համար աւելի եռանդ և փափաք կար ըզմիւռնիոյ Հայոց մէջ։։։ Հա կանչ կառնումք։։։

«Բայց այս ոգերը լրացնելէ առաջ վերստին Մեծ. Նարայը Բիւզանդացւոյ ընտիր գործոյն վերադառնալով, երբ կը տեսնեմք թէ ազգասէր անձինք անբաւ զոհողութիւններ կրնեն Ազգին՝ այսօրինակ նշանաւոր օգտակար ծառայութիւն մի մատուցանելու, մեր ևս պարտքն է, գնահատելով անոնց անձնուիրութիւնն, քաջալերելիս անոնց բարոյապէս և նիւթապէս։ Արդարև ամեն Հայ երիտասարդ այս ընտիր Բաղիշէրքէն օրինակ մի պարտի առնել — ամեն Հայ երիտասարդ կրսեմք, քանզի կերևակայեմք որ մեր բոլոր երիտասարդութիւնն Գաղղիերէն լեզուն ուսմամբ կ'զբաղի։ և որպէս զի բնաւ արդեւք մի չներկայանայ այն ընտիր գործոյն անյապաղ հրատարակման, պարտին ազգայինք կանխաւ բաժանորդագրին առանց ապասելու ամբողջ գործոյն ապագրութեան, և այս կերպիւ կ'ապահովուի նոյնին յաջողութիւնն, և կուներեմք այնպիսի Բառգիրք մի, որոյ նմանն յարդ 'ի բոյս եկած չէ մեր մէջ։։»

Գ. Յ. ԲԱՐԱՋԵԱՆ

ՍԲԲՈՒՀԵԱՆ ՈՐԲԱՆՈՑ

Բաղիշէրան 17 Սեպտ. 1880

։։։ Խմբագրատան Տէր։

Ինչպէս մարդկութեան ընդհանուր յառաջդիմութիւնը, նոյնպէս ազգային քաղաքակրթութիւնն ու երջանկութիւնն իդեական սեռի դաստիարակութենէն կախեալ է։

Մարդկութիւնը իւր նախապատմական շրջանին մէջ՝ իւր ապրուստը՝ իւր մնաւնդը միայն կը մտածէր։ Այր և կին ձեռք ձեռքի տուած՝ նահապետական կեանք կը վարէին, դաշտին մէջ ծնելով, դաշտին մէջ գործելով, դաշտին մէջ մեռանելով։։։

Եկաւ քաղաքակրթութեան դարը, բռնեց ժամանակակից նշային ձեռքէն և տարաւ երանային օրրոցին քով նստեցուց ու ըսաւ, «կրթէ՛ մանուկդ և ահա կրթած կըլլաս Ազգդ։ Պատրաստէ զանկիզ ոերան ու հոգին յաւիտենական ճշմարտութիւններով, և ահա պատրաստած կըլլաս ընդհանուր մարդկութեան ապագայ երջանկութիւնը»։

Այս խորհրդաւոր պատգամին պայծառ արձագանգը եղան թէ՛ 18դ. և թէ՛ 19դ. դարուս մէջ եռանդուն գրիչներ, որոնք գոգցես մէն մի առաքեալներ՝ մարդկութեան ամեն տոհմերու և վիճակի մէջ մտնելով հռետոր հանդիսացան, և մարդ դատարակութեան գեղեցիկ ու վսեմ սկզբունքը ծաւալեցին։

